

13. «Օրհնեալ ես միշտ ի յէութեան,  
Անճառ շնորհօք իմաստութեան:»

14. «Տարւիամ ի լեառըն բաղձական,  
Առ խորանին քում սրբութեան:»

7. Ցանկիս առաջին թ. 1—5 տաղերն ա-  
ներկբայ հարազատ կը համարինք Գնունցւոյ:  
Հիմ ունինք առ այս մեր թ. 684 Չեռագիրն, ուր  
առաջին 5 տաղերն իբրեւ միեւնոյն հեղինակի  
գործ միահետ կը յաջորդեն: Ասոր հետ կը հաշ-  
տուին նաեւ լեզուի եւ ոճի նոյնութիւնք: Թ. 2ը՝  
Հայերգ, էջ 86, կ'ընծայուի «Խաչատուր եպիս-  
կոպոսի ամենայն Գնունեաց». մեզի այնպս է  
Տէվկանցի հոս օգտուած աղբեր արժէքն. մեր  
օրինակն սակայն կը բառնայ ամէն տարակոյս:  
Վեցերորդը նոյնպէս կասկած չի վերցըններ, կրե-  
լով վրան բացայայտ հեղինակին կնիքը: Դժուա-  
րութիւնք կը բարդուին ամենայն սաստկութեամբ  
թ. 7—14 տաղերու վրայ:

Թ. 7. կ'ընծայուի Զաքարիա վարագե-  
ցւոյ, որ հաւանականաբար ժէ դարու համա-  
նուն առաջնորդն է վարագայ, որ ապա կ. Պոլսոյ  
պատրիարք ալ եղաւ (1628—1633)<sup>1</sup>, եթէ  
Չեռագիրք մասնաւոր դժուարութիւն չյարուցա-  
նեն առ այս: Ինձ ծանօթ երկու Չեռագիրք ժէ—  
ԺԸ դարերէ են: Գնուեաց եպիսկոպոսն ալ սակայն  
վարագէն շատ հեռու չէ ապրած, եւ կրնար,

<sup>1</sup> Առ. Դաւրիժ. 241. «Եւ էր Զաքարիա վարագ-  
պետս յերկրէն Վասպուրականի»: Հ. Գ. Գալեֆեթեան՝  
Սարգիս Արքեպ. Սարաֆեան, Վիեննա 1908, էջ 344—345: